մոիկ ընենք և յարտղուարձ ու մշտա-
դեղ Սերոբէից երդերը ասենք, և ա-
ղօթենք տառապեալ մարդոց համար.
անոնց՝ որոնց սիրոց զգացմունքներն վի-
բաւորուած է, և անոնց՝ որ ի սիրտ վի-
բաւորուած ու մեռած են։

Վան Տաէլի հոգին իւր քնացած
ժամանակ թռեր գացեր էր իրմէ։ Հե-
տեւեալ օրը երբ իւր խուցը մտան՝
դիակ մի միայն գտան հոն։

Թարգմանէալ է գաղղիերէնէ։

ԱՌԱԿ

Հայրական կոակ մի է որ կը խօսի։

Ինչաւէտ մեծատուն մի մահուա-
նը վերջին վայրկենին իւր միակ զաւա-
կը կանչելով՝ կը պատուիրէ որ իւր ու-
նեցած հարստութեան մէկ մասը բաղ-
ձանացը համեմատ բաշխէ, և յանձնե-
լով անոր իւր կտակագիրը կը վճարէ
իւր մահկանացուն։

Հայրասէր որդին՝ հօրը կամացը հա-
մեմատ ամենքը ի գործ կը դնէ, որք
էին ազքատաց կարօտելոց՝ եւայլն եւ-
այլն որոշեաց գումարներ նուիրել. և
բայց ի տեսնելն՝ հազար դահեկան ալ
Ամուսնոյ չերկնչող մէկու մը տալ։
Խեղճ տղան այս մասին կ'անճարանայ,
ու գործադրութեանը բուսական հոգ
կը քաշէ. և եղբ մի չգտնար լուծելու
տարակուսանքը, և աւելի ցաւը հօրը
վերջին կտակը կատարելու անկարող
ըլլալը կը համարի։ Ամսոյէս մուտան
ջուրեամբ շրջած տեղն՝ կը տեսնէ
դահիճ մը, որ մահապարտեալի մը
թեւերը կապած՝ կառափնատեղին կը
տանէր գլխատելու։ Ահա գտայ Ամ-
ուսնոյ չերկնչող մի ընելով՝ ետեւէն
կ'երթայ. և երբ դահիճը իւր գործը
կը կատարէ, տղան կը մօտենայ իրեն,
և իւր հօրը վերջին կտակը մանրամա-
նաբար պատմելով՝ հազար դահեկանը
իրեն տալ կ'ուզէ իբրեւ արժանաւորի
մը։ Իսկ դահիճը զարմանալով այսպի-
սի արտաքոյ կարգի կտակին վերայ,
կ'ըսէ. Ամիսիս տղայ, ինչ կը կարծես,
միթէ ես Ամսուծոյ չեմ վախնար.
ինչ յանցանք ես ունիմ. միայն հրա-
մանակատար ծառայ մի եմ. փոխարքայն
հրամայեց՝ ես ալ կը կատարեմ. եթէ
մեղք կայ՝ նորա է. առ քու դրամներդ
և տար տուր որու որ արժան է։

Տղան դրամները առնելով ու զգա-
կի փոխարքային կը ներկայանայ, և թղ-
թութիւն խնդրելով առաջարկութեան՝
կը պատմէ Ներին Ամեծութեան հօրը
կտակը և դահճին պատասխանը։ Փոխ-
արքայն քմծիծաղ ընելով կը պատաս-
խանէ. Յիրաւի շատ միամիտ ես եղեր
ով տղեկ, և կը ներեմ քեզ օրինաց տե-
ղեակ չըլլալուդ համար. տղա՛ առանց
վճռոյ դատաւորին կարող եմ ես մէկ
մարդ մի անգամ կտրել տալ. արդարեւ
մեք իշխանութեան ամենաբ նատած
եմք, և կը պատժեմք այն յանցանքնե-
ը՝ որ բնութիւնը կը սովրեցընէ մեզ
պատժել. բայց մեզ նման էակ մի, իր-
բեւ անբան ապանելն տալու հրամանը
մեզ չպատկանիր, և կը սարսափեցընէ
զմեզ. այդ մասին եղած վճիռը միայն
դատաւորաց անկ է, որոնք օրինագրը-
քէն քաղելով կատան մեզ ի գործա-
դրութիւն. ուստի առ քու հօրդ վեր-
ջին կտակը տար անոնց, որոնց անու-
նը ըսի քեզ։

Թշուառ տղան նեղվելով կտակը՝
կ'առնու դրամները և անմիջապէս դա-
տաւորին տեսանը կը կանգնի, և մի
ըստ միջէ կը պատմէ կտակին մասին՝
դահճին և փոխարքային խօսքերը։

Դատաւորին աչքերը շլանալով
դրամներուն փայլունութենէն կը փա-
փաքի մտսել ձեռքը ինկած պաղ. բայց

digitised by A.R.A.R.@

որպէս թէ այն անարգ անունը իրեն չվերաբերելու համար ճարպիկութիւն մի կը մտածէ, և գոնաղուն ուրախանալով կ'ըսէ. Օ՜ուսկս այս դրամներս ինձ բերերես, թէ և ես չեմ ընդունիր այդ վատ անունը իմ վրաս առնուլ, բայց հանգուցելոյ մի վերջին կամքն ալ կատարելը սրբազան պարտականութիւն մի է. մանաւանդ ալէկ կ'ըլլայ որ դուն գործադրելու անկարող պիտի գտնուիս, և խիղճդ ալ քեզ կը նեղէ, ուստի իբրև օրինաց համեմատ վարուելու համար ահա այն ճանապարհը գտայ։

Յամանակը ձմերնային ըլլալուն և շատ ձիւն եկած ըլլալով. դատաստանարանին սպասաւորները տանիքէն ձիւնները աւելով վար կը թափէին, որ դիզուելով բլրակ մի ձեւացած էր։ Դատաւորը տղուն կ'ըսէ. սա ձիւնը կը տեսնես, այս։ հաղար դահեկանի կը վաճառեմ քեզ կառնուս. այս Տէր իմ. Ուրեմն գնա և շուտով վերցրնելու աշխատէ։ Դատաւորը այսպիսի վարպետութիւն կը տիրանայ դրամներուն։ Իսկ խնդիր տղան 200 դահեկանի տակ ընելով մշակաց հետ այն անպէտ վաճառքը դատարանէն փոխադրելու կաշխատի։ Որպէս այնպէս տառապանքը տեսնելով հօրը բարեկամներէն մին, կը հարցրնէ թէ ինչ գործ կ'ընէ։ Կը պատասխանէ՝ Հայրական վերջին կտակ մի է որ կը կատարեմ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾՔ

Ճանապարհորդք ի տուն, և ի հայրենիս իբրեանց փութան. իսկ իմաստասէրք ի խելս և յիմաստութիւնս։

Որ վատն անձին անբարի խորհի, այլում բարի ոչ կարէ խորհիլ։

Ցանկան ունել խորհրդակից ազնիւ, զժամանակն՝ զոր ունիս մի կորուսաներ։

Իմաստուն խորհուրդ վեհագոյն է քան զձեռս հզօրաց։

Ոչ զերիվարս առանց սանձոց, և ոչ զինչս և զմեծութիւն առանց խելացս սահմանի է։

Որչափ բարեկամն ունիս սակաւ, այնչափ իմացիր ունել քեզ աչս, այնչափ ականջս, և այնչափ ձեռս. և յամենայն կողմանց ունիցիս զուսութիւն, զլուր, և զշշաղուումն. և սիրա յիմանալ զոգուսկարն՝ ոչ ինչ սխալէ։ Լիթէ սատուածս համարիս զքեզ, ոչ ինչ սխալիս, մի ունելով անձն և բազում աչս, և անդամս որով նախանալ նամեան։

Ինչս պարտ է սահմանել վասն բարեկամաց, և ոչ բարեկամս վասն ընչից։

Յմենեցուն հաճելի գոլ յոյժ դժուարին է։

Ոբք ի վերոյ բաղմաց ահեղք են, ի բաղմաց երկնչին. զի յամենեքին սարսին, եւ ինքն յամենեցուն սարսի։

Իշխանքն երիս իրս պարտին ունել հանապազ. առ ժամանակն բնութիւն, առ ընդդիմադարձս համարձակութիւն, և որք ընդ ձեռամբ իւր են՝ բարեմասութիւն։

Որպէս զմեղուն ոչ վասն խայթիցն առես, այլ վասն պտղոյն սիրես, նոյնպէս զբարեկամս մի առեր վասն յանդիմանութեան, այլ վասն քաջալերութեան սիրես։

Յիշեսցն հեղ լեր՝ և ընդ իշխանութեամբ երկիցուսիս։

Իշխան այն է՝ որ զինքն իշխան ոչ գիտէ։

Ժիրշկ և բարեկամ զոյն համարեա՝ որ ի նեղութեան ժամու օգնեն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՐՈՒՍԱՐԱՆ Ս. ԵՂԻԱԶԱՐՈՒ ՍՐՈՒՍԱՂԱՄԻ ԵՍԱՅԻ ՔԱՀԱՆԱՅԻՆ

digitised by A.R.A.R.@